


յագեալ քարպիւրի հոտ, և այս կարզի բաղադրութեանց պէս կը փոխէ պրոմա- ջուրի գոյնը. ի վերջոյ փորձեցինք այս քարպիւրին նիթրոզաթ-ալ պատրաս- տել և քամիչին վրայ կրցանք բիւրեղներ հաւաքել, բայց պահել կարելի չեղաւ մի- ջավայրի ջերմութեան դիւրահալ ըլլալուն,

«Առինք կշռով Յ մասն բիւրեղանալի քացախական թթուուտ և մէկ մաս թորեալ ջուր, զոր աւելցուցինք ասիտ բրոմիթի տեսական ցանակին վրայ (օր. 254., 12 Ծ Օ⁵ տո 20կ. քարպիւր), այնպէս որ թթուացումը՝ ասիտ բրորիոնից և էթիւ- ֆէնիլբէղոն կու ուայ եթէ թթուացած մար-



(Զե Դ)

անշուշտ հալման աստիճաննին չափազանց ցած ըլլալուն պատճառաւ:

«Այս արգասիքները մեր քարպիւրի վրայ բան մը չեն տեղեկացներ, որովհետեւ եր- բորդական ալերով անջրացումն երկու կերպով կարելի է ընել, հետևաբար երկու տարբեր կազմութեամբ ալերուներ ալ ստա- նալ (Ձե Գ):

«Չեզոքացուած քարպիւրի կրկին կապին տեղն որոշելու համար ասիտ քրոմիթի քացախական լոյծով քարպիւրը թթուա- ցուցինք (oxydation).

մինը (1) նշանացոյցն ունի, կամ քացա- խական թթուուտ և բրորիլֆէնիլբէղոն եթէ այս նիթիք (2) ձեն ունի:

«Արդ այս բրոմական թթուացման գլխա- ւոր արգասիքը եղաւ էթիւֆէնիլբէղոնը որ իր կիսաքարպազոնը 175°ի հալեցնելով կրցանք յատկանշել:

«Հետեւաբար կրնանք եղուակացնել որ թթուացմած քարպիւրի գէթ մաս մը հե- տեւալ նշանացոյցին կը համապատաս- խանէ (Ձե Գ) այսինքն ֆէնիլ-3-էզէն-3»:

Հ. Վ. Խոնդիսեան



ԱԶՔԻ ՎԱՐԱԳՈՅՑ (CATARACTE)

ԵՒ ԱՆՈՐ ԴԱՐՄԱՆՅ

Եթէ բազդատենք աչքը լուսանկարի գործիքի մը հետ, կը զրէ Մեյերսթինէկ երևելի բժիշկը՝ սեպտեմբերի Տեղյ Բրյիփ մէջ, կը տեսնենք որ առարկականին կը համապատասխանէ աչքին բիւրեղեայ սապնաձեւ, և ասիկա կը գտնուի աչքին բիւրին ետեք և կը ձեւացնէ բաւական պինդ մարմին մը, բայց բոլորովին թափանցիկ, նման պղտիկ կիզիչ սապնաձեւի մը: Թէ՛ լուսանկարի առարկականը և թէ բիւ-

րեղեայ ոսպնաձեւ նոյն պաշտօնն ունին, Ասոնք այնպէս կը կեղռնացնեն լուսաւոր ճառագայթները՝ որ վերջիններս կը գծա- գրեն լուսանկարի և աչքի գործարանին զգալի մակերեւութին վրայ՝ արտաքին իրե- րուն պղտիկցուցած պատկեր մը: Աչքին մէջ այս պատկերը կ'ամփոփուի ցանցա- կերպէն, և կը փոխանցի ուղեղին մէջ՝ տե- սողական ջրդերուն ձեռքով:

Հիւանդութեան պատճառները

Բիւրեղեայ ոսպնաձեն է տեղի հիւանդութեանս, որ կը կոչուի վարագոյր: Հիւանդութիւնս տեղի կ'ունենայ՝ երբ ոսպնաձելը որ ըստ կանոնի թափանցիկ է՝ կը մթագնի և գրեթէ անթափանց կը մայ լուսաւոր ճառագայթներուն:

Այս եղելութեան պատճառը ղեռ անծանօթ է, թէպէս շարունակ և խնամոտ քննութիւններ կ'ըլլան: Առոյգ է՝ շատ կ'ազգեն այս հիւանդութեան՝ այլ և այլ անհանգստութիւններ փոխն ի փոխ. վասն զի անիկա ստէպ կը գտնուի շաբարախտ և յօդատապ ունեցողներուն մէջ, և կարելի է յառաջ բերուիլ՝ արուեստով՝ կենդանեաց մէջ, տալով անոնց նաւթիւտ, բաժանար հաճար և ուրիշ նիւթեր: Այդ վարագոյրը տեղական հիւանդութիւն մը չէ, այլ ընդհանուր անհանգստութիւններուն հետ կապուած հիւանդութիւն մը: Նոյնպէս կրնայ աչքին մէջ վարագոյր ձևացնել սաստիկ լոյսը և տեսակ մը լուսոյ ճառագայթներ, և յայտնի է որ այս հիւանդութեան տէր կ'ըլլան շատ անզամ այն անձինք՝ որ իբրեւ արուեստին պատճառաւ աչքերին տեսական զօրաւոր շողարձակութեան մը վրայ կը յառեն, զոր օրինակ, ապակեզրութեան:

Վերջապէս ժառանգականութիւնն ալ վարագոյրի հիւանդութեան պատճառներէն մէկը պէտք է նկատել:

Ալստաբանական ընթացք

Վարագոյրը աչքին մէջ առաջ կը բերէ հետևեալ փոփոխութիւնները: Նախ բիւրեղեայ գոյացութեան մէջ փոքր ճեղքեր կը ձևանան, պայծառ հեղանիւթով, նման ապակիի մը կտորին ճաթոսուածքին: Ետքը հեղանիւթը կը պղտորի, կ'արտանայ և աղօսութիւնը միշտ աւելի կը տարածուի: Շատ անզամ մթին պղպջակներ կը ձևանան: Որչափ որ հիւանդութիւնն աւելի տևէ, այնչափ այս փոփոխութիւնները բոլոր բիւրեղեայ ոսպնաձեին վրայ կը տիրանան: Հուսակ

ոսպնաձենը բոլորովին միխրագոյն կ'երեկի: Հիւանդութեան վերջին ըրջանին՝ այս մոխրագոյն վիճակը պարզ աչքով ալ կը տեսնուի, վասն զի բիրը՝ ետքը եղած մութ ոսպնաձեին պատճառաւ, այլ ևս մժին չերեկի, այլ մոխրագոյն:

Երբ աղօսութիւններ տեղի կ'ունենան բիրին վրայ, աչքին առջև շուրջի գգացութիւնաց կուզայ, և կարծես կը ցուցնէ զընտակներ, ճանճեր, սարդի ոստայններ, կամ իրը քող մը կամ մշուչ: Այս երկոյթները կամ դանդաղօրէն կամ արագ կ'աճին, կամ կրնան ժամանակ մը անփոփոխ մնալ, երբեմն ալ կրնան պակսիլ, բայց ամենէն վերջը տեսութեան կարողութիւնը միշտ աւելի սահմանափակ վիճակի մէջ կը զնեն, այնպէս որ հիւանդը՝ անմիջապէս աչքին առջև եղած առարկաներուն միայն շարժումը կը զգայ և խաւարն ու լոյսը միայն կ'որոշէ: Այս շրջանին մէջ վարագոյրը կատարեալ կը կոչուի: Բիւրեղեայ ոսպնաձեն ալ երբ կը խաւարի՝ կը նմանի ամպամած խոչըր ապակիի մը՝ որ միայն թոյլ կու տայ լուսալից ճառագայթներու:

Դարման

Պիտի կարծուի որ վարագուրին բնութեան ճշգրիտ ծանօթութիւնը, զանիկա զարմանելու միջոցը հնարաւոր ըրած է: Բայց այդպէս չէ: Հնուց ի վեր Բարելացիք, Եզիկատացիք և Յոյնց երկու եղանակով կը դարմանէին այս հիւանդութիւնը. Վիրաբուժի ձեռքով կամ զեղական միջոցներով: Խոյնպէս արդի ժամանակիս այս երկու եղանակները գործածուեցան ընդհանրապէս: Բայց ժիթ զարուն վիրաբուժութեան տարօրինակ յառաջադիմութեամբ՝ զեղական եղանակը երկրորդական համարուեցաւ:

Վարագոյրին վիրաբուժական գործողութիւնը այսօր յաճախ կը գործադրուի: և նպատակն է՝ աչքէն ամբողջովին վերցնել խաւարեալ բիւրեղեայ ոսպնաձեւ: Նախ կը բանան աչքին առջև ասենեակ՝ կոչուածը հատումով մը, և անօթը՝ որ կը

պարունակէ ոսպնածել՝ կը կտրի, և ետքը է լսու կամս յարմարիլ առարկաներուն փոքր ճնշումով՝ ոսպնածելն մէջ եղած նիւթը դուրս կ'եւէ բիբին ցոլին, և երբեմ, եթէ հարկ ըլլայ, կանխաւ կտրելով կ'ընդլայնեն,

Երբ վերցնեն արգելօք, այսինքն խաւարեալ ոսպնածել, հիւանդը (որուն վրայ գործողութիւնը կատարուեցաւ) կը նայ զարձեալ տեսնել, բայց բնական է շատ շփոթ վիճակի մէջ, որովհետեւ իրեն կը պակսի մեր վերը բացատրած գործիքը, որ կը ծառայէք լուսեղին ճառագայթները կեղողնացնելու, որպէս զի առաջ զայ մացուր և ճշգրիտ պատկեր մը։ Այս գործիքն տեղ պէտք է ուրիշ մը զնել. և որովհետեւ անկարելի է աչքին մէջ նոր ոսպնածն մը զնել, կը գործածուի այդ նպատակին համար յարմար ակնոցը։

Երբ գործողութիւնը լաւ յաջողի, հիւանդին համար շատ գոհացուցիչ է, թէպէտ կարելի չէ զինքը առողջ մարդու հետ բաղատել, վասն զի իրեն կը պակսի աչքին բիւրեղեայ ոսպնածել՝ որ կարող

տարբեր հեռաւորութեանց։

Բայց վիրարուժական գործողութիւնը բոլորովին ազատ չէ վտանգէ, և երբեմ ալ անկարելի կամ զժուարին կ'ըլլայ՝ գործարաններու հիւանդութեանց պատճառաւ։ Այսով և վերջին տարիներս դարձեալ սկսան թժիշները՝ հիւանդները երկրորդ կերպով զարմանել, այսինքն է զեղատըւոթեամբ։

Այս կերպով քժիշները աչքին վրայ մասնաւոր շիթահամարով մը (contagocce) կը կաթեցնեն այնպիսի հիւթեր՝ որ առաջ կը բերեն լուծումը և ծծումը բիւրեղին խաւարած մասերուն, և միանգամայն կը գործածեն ներքին դեղեր մանիշով (iodē) արիւնը մարմելու համար։ Զմոռնանց ըսելու որ այս կերպը կը գործածուի միայն նոր սկսած վարագորի հիւանդութեանց։ բայց երբ հինցած ըլլայ՝ անհրաժեշտ է վիրարուժին զալուստը։

Թրգմ. Հ. Ե. ՍԻՐՈԽԵԱՆ



ԳՐԱԿԱՌԱԿԱՆ

Կ. ՊՈԼԾՈՅ ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ

ԴԻՄԱՑՍ ՈՒՆԻՄ Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ Կեղրոնական Վարչութեան «Երկամեայ Տեղեկագիրը» (1918 նոյ. 18-1920 թեկտ. 31)։

Այդ սիրուն հատորիկը կը բազկանայ 42 էջերէ, պատրաստուած ինամերով, մաքուր տպագրութեամբ, և արքանի հայկական դահլիճներու պատուարեր զարդն ըլլալու։ Այդ լիակատար տեղեկագիրը կը հաջուէ 10 մասնաճիւղեր կ. Պոլսոյ մէջ և 30-ի շափ՝ զաւանեն և կիլիկիա։ կ. Պոլսոյ կեղրոնական Վարչութիւնը բացած է բազմաթիւ հիւանդանոցներ, մը կ զարմանա-

տուններ, մանկանոցներ, մայրանոցներ, դարմանական գործողութեանց սրահներ, ապացինարաններ և արհեստանոցներ, որոնց մաքրութեան և կոկկութեան վրայ զաղափար մը կազմելու համար՝ բաւական է ակնարկ մը նետել այն բազմաթիւ զեղատիպ նկարներուն և խմբանկարներուն վրայ, որ հատորիկին կու տան փայլ և վայելչութիւն։

Մարդս կ'ապշի կը թայ, թէ ինչպէս կործանուած, բնաշնչման սկ թաթին ներքէ տքացող ազգի մը մէկ զանգուածը՝ կարող է երկու տարուան կարճ ընթացքի